**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

**22/02/2024թ.**

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 65-րդ հոդվածի 1-ին մասի և 67-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արմենուհի Կյուրեղյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Առաջարկում եմ ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ (093)**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 2.** Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1. մասով՝

«2.1 Անընդմեջ երկու անգամ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող որևէ անձի չդիմելու դեպքում տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## 1. Ընդունման անհրաժեշտությունը

«Հանրակրթության մասին» օրենքում 26.06.2023թ փոփոխությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը՝

2. Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

լրացվեց հետևյալ՝ 3-րդ, կետով.

«3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ»:

*Ապացվում է,* որ վարչական մարմինը սահմանադրական վարչարարություն իրականացնելիս միևնույն փաստական հանգամանքի, տվյալ դեպքում դպրոցում սովորող աշակերտի, մասով անհավասար, բացասական տարբերակում ունեցող մոտեցում է դրսևորել, որն անթույլատրելի է: Այս փոփոխությունը *խնդրահարույց է* նաև հետևյալ փաստաթղթերի տեսանկյունից.

- ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում արգելվում է խտրականությունը՝ կախված սոցիալական բնույթի որևէ հանգամանքից:
- ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում հստակ ձևակերպված է. Հանրակրթության ոլորտի առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մինչև 2026 թվականը հանրապետության բոլո՛ր դպրոցների բոլո՛ր դասարաններում ապահովել բարձրորակ ուսուցչական համակազմ:
- ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում ամրագրված է. Կրթության համակարգում հավասարության ապահովումը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմումը պետք է լինեն իրականացվող քաղաքականության անկյունաքարային սկզբունքները:

Այսպիսով, թեև ՀՀ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատություններում ուսուցչի թափուր տեղը համալրելը խնդրահարույց է, սակայն անթույլատրելի է խնդրի լուծման համար օրենքի մակարդակով սահմանել ՀՀ Սահմանադրության հետ առերևույթ հակասություն ունեցող, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրին և ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրին առերևույթ հակասող գործողություններ:

Առաջարկվող փոփոխությունը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը զերծ կպահի վերը նշված հակասություններից:

Բացի այդ. առաջարկվող փոփոխությունը նույնպես կարևորում է առաջ քաշված հիմնախնդրի `լուծման անհրաժեշտությունը՝ անընդմեջ երկու անգամ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող որևէ անձի չդիմելու դեպքում թույլատրելով նույն ուսանողին՝ մասնակցելու մրցույթին:

Բնական է, որ ուսուցչական համակազմի համալրման խնդիր ունեցող բնակավայրերի, և առաջին հերթին գյուղական բնակավայրերի ուսումնական հաստատությունները, կունենան նման իրավիճակ և հետևաբար առաջարկվող լուծումը կվերաբերի իրենց:

Տեսականորեն չի կարելի բացառել, որ նման իրավիճակ կարող են ունենալ նաև քաղաքային բնակավայրերի ուսումնական հաստատությունները:

## 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ գյուղական շատ բնակավայրերի ուսումնական հաստատություններում ուսուցչի թափուր տեղը համալրելը խնդրահարույց է: Եվ այս խնդիրը լուծելու համար ՀՀ կառավարությունը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 26.06.2023թ փոփոխությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը՝

2. Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

լրացրեց հետևյալ՝ 3-րդ, կետով.

3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

Սակայն այս փոփոխությունը մի խնդրահարույց հարցը լուծելու համար առաջացրեց մեկ այլ՝ ավելի խնդրահարույց հարց.

Օրենքի մակարդակում հանրապետության դպրոցները տարանջատվեցին գյուղական և ոչ գյուղական բնակավայրերի դպրոցների և 1-ինի դեպքում որպես ուսուցիչ աշխատելու հնարավորություն տրվեց բակալավրիատի կրթական ծրագրով 4-րդ կուրսի ուսանողներին, ովքեր, ի դեպ, որոշ դեպքերում դեռևս մանկավարժական պրակտիկա չեն էլ անցել:

*Նման մոտեցումը*

- ✓ առերևույթ հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում՝ կախված սոցիալական բնույթի որևէ հանգամանքից, խտրականության արգելման պահանջին,
- ✓ խիստ անընդունելի մոտեցում է սոցիալական արդարության տեսանկյունից,
- ✓ հակասում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում հանրակրթության ոլորտի առկա խնդիրների լուծման համար սահմանված պահանջներին,
- ✓ հակասում է ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում ամրագրված հետևյալ պահանջին. «Կրթության համակարգում հավասարության ապահովումը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմումը պետք է լինեն իրականացվող քաղաքականության անկյունաքարային սկզբունքները»:

*Բացի այդ*. խոսելով ընդհանրապես գյուղական բնակավայրերի մասին, մենք հնարավորություն ենք տալիս այդ մոտեցման կիրառություն նաև խոշոր քաղաքներին մոտ գյուղական բնակավայրերում և, ընդ որում, բարձրագույն կրթությամբ ոլորտային մասնագետների և ուսանողների՝ մրցույթին մասնակցության միաժամանակյա հնարավորությամբ, ինչը կարող է տարբեր ռիսկեր առաջացնել:

**Կարգավորման նպատակը**

Խիստ կարևորելով ՀՀ գյուղական բնակավայրերի ուսումնական հաստատություններում ուսուցչի թափուր տեղերի համալրման անհրաժեշտությունը՝ առաջարկել այդ հիմնախնդրի լուծման մի տարբերակ, որը մի կողմից կլուծի խնդիրը, և մյուս կողմից՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը զերծ կպահի

- սոցիալական անարդարության հիմք հանդիսացող,
- ՀՀ Սահմանադրության պահանջին առերևույթ հակասող,
- ՀՀ կառավարության 2021-2026թթ. և ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրերում ամրագրված՝ կրթության համակարգում հավասարության ապահովմանը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմմանը միտված քաղաքականության անկյունաքարային սկզբունքները խախտող ձևակերպումներից:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 26. Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը**
***(վերնագիրը խմբ. 06.10.11 ՀՕ-264-Ն)***

1. Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

2. Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը.

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով.

~~3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:~~

«2.1 Անընդմեջ երկու անգամ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող որևէ անձի չդիմելու դեպքում տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

4. Զբաղեցրած պաշտոնի նկարագրին ուսուցչի համապատասխանության որոշման նպատակով պետությունն իրականացնում է ուսուցչի հերթական ատեստավորում՝ ուսուցչի մասնագիտական չափանիշներով սահմանված մասնագիտական զարգացման պահանջներին համապատասխան: Ուսուցիչը կարող է իր նախաձեռնությամբ և իր միջոցներով

վերապատրաստվել և դիմել ատեստավորման, բայց ոչ շուտ, քան հերթական ատեստավորումից մեկ տարի հետո:

5. Տնօրենը ապահովում է ուսուցչի մասնակցությունը մասնագիտական զարգացման կարիքի հիման վրա իրականացվող վերապատրաստմանը:

6. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ոչ ուշ, քան երեք ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

7. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը պետական ուսումնական հաստատության միջոցների հաշվին նախապես անցնում է վերապատրաստում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի մասնագիտական չափանիշներով սահմանված մասնագիտական զարգացման պահանջներին համապատասխան:

8. Հերթական ատեստավորման ենթակա չէ՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ուսուցիչը.

2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը, եթե նա նման հայտ չի ներկայացրել:

9. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը հերթական ատեստավորման ենթակա է արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

10. Հերթական ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

11. Յուրաքանչյուր ուսուցիչ, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները բավարարող յուրաքանչյուր անձ կարող են դիմել և մասնակցել կամավոր ատեստավորմանը:

12. Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է ուսուցչի դրույքաչափի փոփոխության և հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:

13. Հերթական և կամավոր ատեստավորման հանձնաժողովների՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

14. Հերթական և կամավոր ատեստավորման հանձնաժողովների որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն: Ուսուցչի ազատումը զբաղեցրած պաշտոնից հետաձգվում է մինչև բողոքարկման արդյունքով վերջնական որոշում կայացնելը:

15. Զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում անձը չի զրկվում մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

16. Կրթական քաղաքականության փոփոխման դեպքում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կարող է կազմակերպել ուսուցիչների արտահերթ պարտադիր վերապատրաստում պետական բյուջեի կամ այլ միջոցների հաշվին:

17. Սույն օրենքով սահմանված կարգերով ատեստավորված ուսուցիչը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել ուսուցչի տարակարգի շնորհման գործընթացին:

18. Ուսուցչի տարակարգը քառաստիճան է և շնորհվում է ուսուցչի մասնագիտական չափանիշներին համապատասխան:

19. Ուսուցչի տարակարգի շնորհման մասին որոշումն ընդունվում է պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանրապետական հանձնաժողով) կողմից:

20. Ուսուցչի տարակարգերը համապատասխանում են ուսուցչի մասնագիտական չափանիշներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգևատրումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն):

21. Հանրապետական հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) ենթակա է համապատասխան տարակարգի շնորհման.

2) ենթակա չէ համապատասխան տարակարգի շնորհման:

22. Հանրապետական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազորված մարմին կամ դատական կարգով:

23. Հանրապետական հանձնաժողովի որոշումը հիմք է կրթության պետական կառավարման մարմնի կողմից ուսուցչին համապատասխան տարակարգ շնորհելու և 5 տարի ժամկետով հավելավճար սահմանելու համար:

24. Տարակարգ ստացած ուսուցչին տրվում է համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

25. Բողոքի առկայության դեպքում ուսուցչին տարակարգ շնորհելը հետաձգվում է մինչև վերջնական որոշում կայացնելը:

26. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի տարակարգը և կամավոր ատեստավորման արդյունքով սահմանվող դրույքաչափը և հավելավճարը պահպանվում են:

27. Ոչ պետական ուսումնական հաստատության ուսուցիչը կարող է սույն օրենքով սահմանված կարգերով մասնակցել կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացին հիմնադրի ֆինանսական միջոցների հաշվին: